Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: Սկսած 1993 թ., շուրջ 25 տարի աշխատել է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004 թվականից դասավանդում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում: 2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Երկու տասնյակից ավել գիտական, վերլուծական հոդվածների և 2 մենագրության հեղինակ է:

ORCID - https://orcid.org/0000-0001-9014-5892

ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԹՆՋՈՒԿ. ԻՆՉՊԵՍ Է ԴԻՐՔԱՎՈՐՎՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.2-112

Խելամիտ փիրակալը չի կարող և չպիտի հավատարիմ մնա խոստմանը, եթե դա վնաս է հասցնում իր շահերին:
Նիկոլո Մաքիավելի

Հիմնաբառեր. *ռազմական հակամարտություն, ճգնաժամ, հետքովիդյան աշխարհ, ՄԱԿ, Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան*

Հետքովիդյան աշխարհում տեղի ունեցող քաղաքական, ռազմական կամ տնտեսական յուրաքանչյուր իրադարձություն ունակ է հիմնովին փոխելու մեր պատկերացումներն ինչպես տվյալ իրադարձության ակունքների պարզաբանման, այնպես էլ դրա շարժառիթների գնահատման ու վերջնական արդյունքի կանխատեսման առումով: COVID-ի մարտահրավերը վեր հանեց ֆորս մաժորային իրավիճակներում ճգնաժամային կառավարման համընդհանուր բացերը, իսկ տեղեկատվական քաոսային վայրիվերումների արդյունքում բացահայտվեց առաջին հայացքից պարզունակ թվացող կենցաղային ու կարգապահական պարտավորությունների կատարման հանդեպ մարդկանց որոշ մասի ագրեսիվ հակազդեցության ֆենոմենը: Այսինքն՝ նույն երևույթի շուրջ ձևավորվեց երկու «բանակ»՝ «հավատավորների» և «անհավատների»: Այս երկփեղկվածության հիմնական դրդապատճառն իրար հակասող ագրեսիվ տեղեկատվական «ահաբեկչությունն» էր, որն էլ ստեղծեց որոշակի բացասական մթնոլորտ այն բոլոր ծրագրված՝ համընդհանուր և պարտադիր միջոցառումների հանդեպ, որոնք իրականացվում էին մարդու անվտանգ և որակյալ կյանքի ու առողջության ապահովման նպատակով: Եվ ահա դեռևս ամբողջապես չձերբազատված COVID-ի վախերի և երկփեղկվածության մղձավանջից, աշխարհը, ի դեմս ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության, ընկղմվում է մի նոր մղձավանջի մեջ, և ի տարբերություն նախորդի, այս դեպքում չկա անգամ համընդհանուր միասնական դիրքորոշում տվյալ իրադարձության նկատմամբ նույնիսկ այն միավորումների կամ կազմակերպությունների պարագայում, որոնց համախմբված կարծիքը նմանատիպ «ֆորս մաժոր-

ներում» կամ ճգնաժամային իրավիճակներում արդյունավետ կերպով օգտագործում էր որպես հիմնական «հաղթաթուղթ»:

Յուրաքանչյուր ռազմական բախում արդեն իսկ արհավիրք է՝ մարդկային և նյութական կորուստների բավարար չափաբաժնով: Անկախ ծավալներից, բոլոր բախումներն ունեն ընդհանրություն՝ կրկնվելու մեծ հավանականություն, քանի որ հաղթողի ու պարտվողի դերաբաշխումը չափազանց հարաբերական է տարածության և ժամանակի մեջ: Դրա վառ ապացույցն են 20-րդ դարի երկու համաշխարհային պատերազմները, երբ հաղթողները փոփոխվում էին, ակտիվ «տաք» պատերազմներին հաջորդում էր «սառը» փուլը, որը պատեհ պահի կրկին վերածվելու էր «տաքի»՝ համարյա նույն դերակատարներով, միայն մեկ տարբերությամբ, որ պարբերականությունների այս շղթայում, ելնելով «սառը» փուլի տրամաբանությունից, կարող էին փոփոխվել նաև դիրքավորումները, և հնարավոր է՝ նախկինում մեկ ճակատով հանդես եկող համախոհները հայտնվեին դեմ դիմաց՝ հակառակ «խրամատներում»:

Ցավոք, նմանօրինակ փուլային որոգայթում հայտնվեց նաև Հայաստանը, որն այս պահին ունի Արցախյան չլուծված հիմնախնդիր, հարևան չորս երկրներից առնվազն երկուսի հետ՝ ոչ բարիդրացիական հարաբերություններ ու չկարգավորված սահմանային խնդիրներ: Գիտակցելով ռազմական ճանապարհով հիմնահարցը վերջնականորեն լուծելու անհնարինությունը, ինչպես նաև հասկանալով ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության հանդեպ մեր դիրքավորումից բխող հետևանքները՝ մեզ անհրաժեշտ է սեղմ ժամկետում կատարել արտաքին և ներքին միջավայրերի հնարավորինս ճշգրիտ վերլուծություն՝ հավանական ելքերի սցենարների մշակմամբ: Առանց դրա հնարավոր չէ աշխարհակարգի փոփոխության փուլի այս բարդ իրավիճակից դուրս գալ մեղմ «քերծվածքներով»: Մեր հետագա գործողությունների «ճանապարհային քարտեզի» և ժամանակացույցի կազմման համար, նախ և առաջ, պետք է հստակ կերպով պատկերացնել, թե ռուս-ուկրաինական հակամարտության հանդեպ ինչպես են դիրքավորվել աշխարհի պետությունները, տարածաշրջանները, ու ինչ շարժառիթներով և դրդապատճառներով են նրանք առաջնորդվում: Պետք է նաև հաշվի առնել, որ դրանից բխող իրավիճակները Հայաստանի համար ոչ միայն կենսական են լինելու իրենց էությամբ, այլև ունենալու են ընդգծված գոյապահպանական բաղադրիչ:

Ընդհանուր պատմություն

Թե ինչպես կարելի է խեղաթյուրել պատմությունը, պատմական փաստերը և խառնել «թացն ու չորը», Հայաստանի 30-ամյա հանրապետությունն իր «մաշկի» վրա զգացել և զգում է մինչև այսօր՝ լինի դա Արցախյան հիմնախնդրի թե անգամ մեր հանրապետության տարածքային ամբողջականության հարցի հետ կապված: Նմանօրինակ անարդար պատմություններից մեկի սուբյեկտի աչքերով այդ ամենին նայող հայաստանյան դիտորդին և հետազոտողին ռուս-ուկրաինական այսօրվա թնջուկի նախադրյալները, այսպես թե այնպես, «ուղեկցելու» են դեպի IX դար: Անգամ շարժվելով այդ մեկնակետից՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինչպես ամեն մի հակամարտության պարագայում, այս դեպքում նույնպես պատմական իրողությունները հակամարտող կողմերը կարող են մեկնաբանել յուրովի՝ հաճախ 180 աստիճանով միմյանցից տարբերվող դիտանկյուններով: Փորձելով քայլել «ոսկե միջինի» ճանապարհով՝ ներկայացնենք այն կարևոր իրադարձությունները, առանց որոնց հնարավոր չէ ընկալել այսօրվա ռուս-ուկրաինական հարաբերությունների ճգնաժամի հիմքն ու խորությունը:

Կանադական Ալբերտի և ԱՄՆ-ի Միչիգանի համալսարանների դասախոս, ռուս-ուկրաինական հարաբերությունների փորձագետ, դոկտոր պրոֆեսոր Սերգեյ Եկելչիկն ընդգծում է հարևան երկու երկրների հարաբերությունների պատմական 9 հիմնական դրվագները[1], որոնք սկսվում են IX դարում Կիևյան Ռուսիայի ստեղծման պատմությունից և հասնում մինչև մեր օրերը: Սակայն, Եկելչիկն այդ ամենը ներկայացնում է պրոուկրաինական տես-

[1] https://www.uvic.ca/humanities/germanicslavic/people/home/faculty/profiles/yekelchykserhy.php

անկյունից, և այդ մեկնաբանությունների շահառուն, ըստ էության, մեկն է: Հետևաբար՝ դա կարելի է համարել որպես հակամարտության մեկ կողմի տեսակետ: Նույն դրվագների մասին ռուսական աղբյուրներն ու պատմագիտական շրջանակները բոլորովին այլ մեկնաբանություններ են ներկայացնում, և դա զարմանալի չէ: Ստորև փորձել ենք հնարավորինս անկողմնակալ կերպով ներկայացնել երկու հարևան երկրների համար բախտորոշ իրադարձությունների ամբողջական պատկերը (աղյուսակ 1):

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ռուս-ուկրաինական հարաբերությունների պատմական կարևոր իրադարձությունները (IX-XXI դարեր)

Հ/հ	Տարեթիվ	Իրադարձություն	Նշանակություն
1	IX դար	Կիևյան Ռուսիայի ձևավորումը[2]	Արևելյան սլավոնական համայնքների և սկանդինավյան ցեղախմբի վերնախավի միավորման արդյունքում ստեղծվեց Կիևյան Ռուսիա կոչվող պետությունը, որը 988 թ.-ին Մեծ արքայազն Վլադիմիրի ջանքերով ընդունեց քրիստոնեություն:
2	1648 թ.	Կազակական հեթմանության (Զապորոժյան Սեչի)[3] ստեղծումը	Ուղղափառ կազակները՝ հեթման (զինվորական առաջնորդ) Բոգդան Խմելնիցկու գլխավորությամբ 1648 թ.-ին ապստամբեցին կաթոլիկ լեհական տիրապետության դեմ և ստեղծեցին Կազակական հեթմանությունը (Զապորոժյան Սեչը):
3	1654 թ.	Պերեյասլավի պայմանագրի կամ համաձայնագրի կնքումը[4]	Մոսկվայի մեծ իշխանությունը և Լիտվայի մեծ դքսությունը՝ ներառած Լեհաստանի թագավորությունը, որոնց միավորումը հետագայում անվանակոչվեց Ռեչ Պոսպոլիտա, նշված պայմանագրով բաժանեցին վիճահարույց ռուսական հողերը, որտեղ արդեն իսկ ստեղծվել էր ուկրաինացի կազակների նոր միավորումը՝ կազակական հեթմանությունը:
4	1667 թ.	Մնդրուսովոյի դաշնագրի ստորագրումը[5]	Ստորագրվել է 1667 թ.-ի հունվարի 30-ին Լեհաստանի և Ռուսաստանի միջև՝ հստակորեն ամրագրելով երկու երկրների սահմանները: Արդյունքում, Կազակական հեթմանությունը Դնեպր գետի երկայնքով բաժանվելով երկու մասի՝ հայտնվել է ռուս-լեհական համատեղ կառավարման ներքո: Այս գործողությունն իրականացնելիս հաշվի չի առնվել հեթմանության կարծիքը:
5	1772-1781 թթ.	Կազակական հեթմանության (Զապորոժյան Սեչի) գոյության դադարեցումը	1764-1781 թթ. կազակական հեթմանությունն աստիճանաբար ներառվել է Ռուսաստանի Մալոռուսիա (Փոքր Ռուսիա) նահանգի կազմում և դադարել է գոյություն ունենալ:
6	1840 թ.	Ուկրաիներեն առաջին գրական ստեղծագործության հրապարակումը	Ուկրաինայի ազգային բանաստեղծ Տարաս Շևչենկոն հրատարակել է իր առաջին բանաստեղծություններն ուկրաիներենով, ապա ստեղծել գաղտնի կազմակերպություն, որի նպատակն էր ազատ սլավոնական դաշնության հիմնադրումը:
7	1918-1922 թթ.	Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետության, ապա Ուկրաինայի Խորհրդային Հանրապետության հռչակումը և ընդգրկումը ԽՍՀՄ կազմում[6]	1917 թ.-ին, Ռուսաստանի փլուզված միապետության «ավերակների տակ չմնալու» մտահոգությունից դրդված, Առաջին համաշխարհային պատերազմի և քաղաքական տարաձայնությունների խառնակ ժամանակահատվածում ուկրաինացի մտավորականները ստեղծեցին համակարգող մարմին՝ Կենտրոնական ռադան (խորհուրդը), որը շուտով վերածվեց հեղափոխական խորհրդարանի: Պատերազմի մեջ գտնվող Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունն Ուկրաինային ինքնավարություն շնորհեց, որը կոչվեց Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետություն (ՈՒԺՀ), սակայն գալով իշխանության, բոլշևիկները հրաժարվեցին ճանաչել այն և սկսեցին վարել Ուկրաինան խորհրդային պետության կազմում ներառելուն միտված ակտիվ քաղա-

[2] https://histrf.ru/read/articles/drievnierusskoie-ghosudarstvo-kiievskaia-rus
[3] https://geomap.com.ua/ru-uh8/299.html
[4] https://day.kyiv.ua/ru/article/istoriya-i-ya/pereyaslavskoe-soglashenie-1654-goda-istoricheskie-uroki-dlya-ukrainskogo
[5] https://www.prlib.ru/history/619017
[6] https://bigenc.ru/domestic_history/text/4217923

			քականություն: Դրան հակազդելու համար ՈՒԺՀ-ն 1918 թ. հունվարին հռչակեց լիակատար անկախություն և Եվրոպայի՝ Բրեստում պատերազմող գլխավոր պետությունների հետ կնքեց խաղաղության պայմանագիր՝ առաջ ընկնելով նույն գործընթացը սկսած բոլշևիկյան Ռուսաստանից: Բայց եվրոպական որևէ երկիր չճանաչեց Ուկրաինայի ինքնիշխանությունը, քանի որ Ռուսաստանում՝ ներառյալ ՈՒԺՀ հռչակված երկրի տարածքներում, արտաքին պատերազմին զուգահեռ, ընթանում էր նաև ներքին՝ քաղաքացիական պատերազմ (1917-1922 թթ.): Խորհրդային Ռուսաստանը, եվրոպական երկրների չեզոք կեցվածքն ընդունելով ի գիտություն, փոխզիջումային համաձայնության եկավ ՈՒԺՀ-ի հետ, խորհրդայնացնելով և այն դարձնելով Ուկրաինայի Խորհրդային Հանրապետություն, իսկ 1922 թ.-ին, շնորհելով Խորհրդային Միության հիմնադիր անդամի կարգավիճակ, ներառեց ԽՍՀՄ կազմում:
8	1945 թ.	Ուկրաինայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքների ընդլայնումը	Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո հակաֆաշիստական ուժերը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի օկուպացված տարածքներում իրականացրին ազդեցության գոտիների հստակեցում, ինչի արդյունքում լեհական հողերի որոշակի հատված, որն արդեն իսկ զավթվել էր ԽՍՀՄ-ի կողմից դեռևս 1939 թ.-ին, անցավ Խորհրդային Միության մաս կազմող Խորհրդային Ուկրաինային, որպեսզի չեզոքացվի տվյալ տարածքներում պատերազմից առաջ և պատերազմի ժամանակ ուկրաինացի ազգայնականների դիմադրության պայքարը:
9	1954 թ.	Ղրիմի Ինքնավար Հանրապետության փոխանցումը ԽՍՀՄ-ի մաս կազմող ՌԽՖՀ-ից ՈՒԽՍՀ-ին[7]	1944 թ.-ին՝ Ղրիմի ազատագրումից հետո, Ստալինի հրամանով իրականացվեց Ղրիմի թաթարների բռնի տեղահանում, և էթնիկ ռուսները Ղրիմում դարձան մեծամասնություն: 1954 թ.-ին Պերեյասլավի պայմանագրի կնքման 300-ամյակի կապակցությամբ, ԽՍՀՄ առաջնորդ Խրուշչովի նախաձեռնությամբ իրականացվեց Ղրիմի հանձնումն Ուկրաինական ԽՍՀ-ին: Դա փորձ էր խորհրդային գաղափարախոսությամբ «զինված» թերակղզին, որպես հակակշիռ ուժ, օգտագործելու ընդամենը 9 տարի առաջ ՈՒԽՍՀ-ին միացված արևմտյան շրջանների նկատմամբ, որտեղ գերիշխում էր ազգային, իսկ շատ դեպքերում՝ ազգայնական գաղափարախոսություն:
10	1991 թ.	Խորհրդային Միության փլուզումը և Ուկրաինայի անկախության հռչակումը	1991 թ. դեկտեմբերին Ուկրաինայում տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որից հետո Ռուսաստանը, Ուկրաինան և Բելառուսը նախաձեռնեցին Խորհրդային Միության պաշտոնական լուծարումը:
11	2014 թ.	Ղրիմի միացումը Ռուսաստանի Դաշնությանը և ճգնաժամը Դոնբասում[8]	Ուկրաինայում իշխանության համար կոշտ պայքարի խառնաշփոթում 2014 թ.-ին Ռուսաստանը վերամիավորեց Ղրիմը: Միաժամանակ, ռուսալեզու բնակչության դժգոհությունը Դոնբասում դարձավ զինված հակամարտության սկիզբ, որի արդյունքում ստեղծվեցին Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական Հանրապետությունները, որոնք մինչև 2022 թ.-ը չէին ճանաչվել որևէ երկրի կողմից:
12	2014 թ.	«Նորմանդական» ձևաչափի ստեղծումը[9]	«Նորմանդական քառյակը» ստեղծվեց Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Ուկրաինայի համատեղ նախաձեռնությամբ, որի նպատակը Ուկրաինայում իրավիճակի կարգավորմանը միտված քայլերի մշակումն էր և ռուս-ուկրաինական հարաբերությունների կարգավորումը:
13	2022 թ.	Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական Հանրապետությունների ճանաչումը Ռուսաստանի Դաշնության կողմից[10]	Չլուծված խնդիրների հետևանքով 2022 թ. փետրվարի 21-ին Ռուսաստանը ճանաչեց Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական Հանրապետությունների անկախությունը և համագործակցության պայմանագրի կնքումից հետո՝ 2022 թ. փետրվարի 24-ին, սկսեց վերոնշյալ հանրապետություններին ռազմական անմիջական օժանդակություն տրամադրելու գործընթացը:

[7] https://www.bbc.com/ukrainian/blog-history-russian-43110921
[8] https://ria.ru/20141215/1037731276.html
[9] https://www.dw.com/ru/%D0%BD%D0%BE%D1%80%D0%BC%D0%B0%D0%BD%D0%B4%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F-%D1%87%D0%B5%D1%82%D0%B2%D0%B5%D1%80%D0%BA%D0%B0/t-18210985
[10] https://www.azatutyun.am/a/31714944.html

Նորօրյա ճգնաժամ

Դոնբասի 8-ամյա ճգնաժամն այդպես էլ չհանգուցալուծվեց, և այդ տարիների ընթացքում ցածր ինտենսիվության պատերազմական «բռնկումներն» ամենօրյա իրականություն էին: Ռազմական բախման հետևանքով Դոնբասում զոհերի թիվն անցավ 14 հազարից: Չդադարող հակամարտության պայմաններում «Նորմանդական քառյակը» (Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, Ուկրաինա), որի հանդիպումներն անցկացվում էին քառյակում ընդգրկված երկրների ԱԳՆ ներկայացուցիչների, արտգործնախարարների կամ պետությունների ղեկավարների մակարդակով, 2015 թ.-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում ստորագրեց արձանագրություն, որը նախանշեց ճգնաժամի խաղաղ կարգավորման վերջնական ուղին, սակայն, ցավոք, դա այդպես էլ մնաց անկատար, քանի որ Ուկրաինայի համար անընդունելի էին ճանապարհային քարտեզի որոշակի քայլեր, որոնք վերաբերում էին Դոնեցկի և Լուգանսկի նորաստեղծ, բայց չճանաչված երկու հանրապետությունների ընտրական գործընթացներին: Քառյակի աշխատանքներում իր հստակ դիրքորոշումն էր արտահայտում նաև Ռուսաստանը, որը հիմնականում վերաբերում էր 1997 թ.-ից ի վեր դաշինքին միացած ՆԱՏՕ-ի անդամ, իսկ նախկինում Վարշավյան պայմանագրի[11] անդամ սահմանակից երկրներում տեղադրվող զենքի տեսակների սահմանափակումներին: Ռուսաստանը պահանջում էր նաև գրավոր երաշխիքներ ՆԱՏՕ-ի՝ դեպի Արևելք հետագա ընդլայնման դեմ, որի հիմնական շահառուներն էին Ուկրաինան և Վրաստանը: Միաժամանակ, ռուսական ՋԼՄ-ներում պարբերաբար մտավախություններ էին հայտնվում Ռուսաստանի վրա ՆԱՏՕ-ի և/կամ Դոնբասում Ուկրաինայի հարձակման վերաբերյալ: Քանի որ Քառյակի երկրների սկզբունքային դիրքորոշումներն այդպես էլ չհանգեցին տեսակետների փոքրիշատե մերձեցմանը, արդյունքը եղավ այն, որ 2022 թ. փետրվարի 21-ին Ռուսաստանը ճանաչեց Դոնեցկի և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունների անկախությունը և դրան հաջորդած համագործակցության երկկողմ պայմանագրերի կնքումից երկու օր հետո, վերոնշյալ հանրապետություններին ռազմական անմիջական օժանդակություն տրամադրելու գործընթացով պայմանավորված, իր զինվորական ստորաբաժանումներով «մուտք գործեց» Ուկրաինա: Ռուսական կողմը դա անվանեց «հատուկ գործողություն Ուկրաինայում», իսկ Արևմուտքը՝ «ռուս-ուկրաինական պատերազմ»:

Դիրքավորումներ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը 2022 թ. փետրվարի 23-ին կոչ արեց Ռուսաստանին «դադարեցնել ռազմական գործողություններն Ուկրաինայում և անհապաղ դուրս բերել զորքերը»[12], իսկ 2022 թ. փետրվարի 25-ին Նյու-Յորքում տեղի ունեցավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ՝ նվիրված Ուկրաինայի իրավիճակին: Վերոնշյալ ձևակերպումով բանաձևը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում արգելափակվեց խորհրդի մշտական անդամի վետոյի իրավունք ունեցող Ռուսաստանի կողմից (մշտական անդամները 5-ն են՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Չինաստան), ընդ որում, Անվտանգության խորհրդի 15 անդամից 11-ը քվեարկեց կողմ, իսկ Չինաստանը, Հնդկաստանը և Արաբական Միացյալ Էմիրությունները՝ ձեռնպահ[13]:

Արդյունքում, պարտադիր կատարման ուժ ունեցող բանաձևը չընդունվեց, որից հետո նույնաբովանդակ բանաձևով, սակայն արդեն որոշումների կատարման առումով ոչ պարտադիր փաստաթուղթն ԱՄՆ-ի և Ալբանիայի կողմից ներկայացվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա: 2022 թ. մարտի 2-ին վերջինս ձայների ճնշող մեծամասնությամբ քվեարկեց Ուկրաինայում Ռուսաստանի կողմից «հատուկ ռազմական գործողության» անցկացումը դա-

[11] https://www.prlib.ru/history/619242
[12] https://armenpress.am/arm/news/1076314/
[13] https://rus.ozodi.org/a/31724408.html



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

2022 թ. մարտի 2-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի քվեարկության դիրքավորումներն ըստ պետությունների

տապարտող բանաձևի օգտին[14]:

Ընդհանուր առմամբ, ՄԱԿ-ի 141 անդամ երկրներ աջակցեցին ներկայացված փաստաթղթին և քվեարկեցին կողմ, 35-ը, ներառյալ Հայաստանը, փորձելով վարել հավասարակշռված քաղաքականություն՝ ձեռնպահ, 5-ը՝ Ռուսաստանը, Բելառուսը, Հյուսիսային Կորեան, Էրիթրեան և Սիրիան՝ դեմ, իսկ շուրջ մեկ տասնյակ երկրներ, մասնավորապես՝ Բուրկինա Ֆասոն, Տոգոն, Գվինեան, Ադրբեջանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը և այլն, ուղղակի չմասնակցեցին քվեարկությանը: Գծապատկեր 1-ում պատկերված է ոչ միայն երկրների, այլև տարածաշրջանների դիրքավորումն այս հարցի նկատմամբ, որի հիմքում քաղաքական, տնտեսական շահերն ու վերաբերմունքն են: Ակնառու են նաև Ռուսաստանի հետ ցամաքային մեծ սահմաններ ունեցող երկրների զգուշավորությունն ու գործընթացի վերաբերյալ հնարավորինս հավասարակշիռ դիրքավորման ցանկությունը: Բացառություն է, թերևս, եվրոպական տարածաշրջանը, որի դիրքավորումն ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Հետաքրքրական է «BRICS»-ի անդամ 5 երկրների[15] դիրքավորումը, որոնցից երեքը՝ Չինաստանը, Հնդկաստանը և Հարավային Աֆրիկան, քվեարկեցին ձեռնպահ: Խմբի չորրորդ անդամը՝ Բրազիլիան, իհարկե, հաշվի առնելով փաստաթղթի ոչ պարտադիր կիրառման կարգավիճակը, քվեարկեց կողմ, թեև նախագահ Ժաիր Բոլսոնարոն փորձում է առավել սերտացնել կապերը կազմակերպության հինգերորդ անդամի՝ Ռուսաստանի հետ: Քվեարկության ժամանակ Աֆրիկյան մայրցամաքի երկրները կիսվեցին երկու մասի, 28 անդամ կողմ արտահայտվեց բանաձևին, իսկ 25-ը կամ քվեարկեց ձեռնպահ, կամ էլ չմասնակցեց քվեարկությանը: «Ծոցի» արաբական երկրները, որոնք սկզբում զգուշավորություն էին ցուցաբերում և փորձում չվատթարացնել հարաբերությունները Ռուսաստանի հետ, ԱՄՆ-ի լոբբինգի և ճնշման գործիքակազմի ակտիվ կիրառումից հետո քվեարկեցին փաստաթղթի ընդունման օգտին:

Ինչո՞վ են բացատրվում ուկրաինական

[14] https://news.un.org/ru/story/2022/03/1419092
[15] www.investopedia.com/terms/b/brics.asp

ճգնաժամի նկատմամբ տարածաշրջանային և ազգային վերաբերմունքի տարբերությունները: Ճգնաժամային խմբի փորձագետների[16] կողմից մի շարք որոշակի դեպքերի ուսումնասիրություններն ու վերլուծությունները բացահայտում են քաղաքական և տնտեսական գործոնների այն լայն շրջանակը, որը ստիպել է երկրներին դիրքավորվել հենց այդ «խրամատներում»: Դրանք ներառում են աշխարհաքաղաքական, տնտեսական և անվտանգության՝ տեսանելի ու անտեսանելի մի շարք գործոններ, որոնք առաջ են բերել և առաջ են բերելու արտաքին ու ներքին ներքաղաքական լարվածություն, ինչն էլ կարող է հանգեցնել անկանխատեսելի վերջնարդյունքի:

Այս թնջուկը, կարծես, հետքովիդյան աշխարհն ազդեցության նոր գոտիների բաժանման գործընթացի «լակմուսի թուղթը» լինի, և խնդիրը միայն համակրանքը կամ ինքնիշխանության նկատմամբ սկզբունքային տեսակետ ունենալը չէ, այլ հենց որոշակի դիրքավորման ռազմավարության ամրագրումը, որը կարող է դառնալ յուրօրինակ հայտ՝ հետագայում համաշխարհային տնտեսական շուկայում սեփական մասաբաժնի դերի, տեղի ու չափի սահմանման տեսանկյունից:

Դիրքավորումների առումով, կարծես, ամեն ինչ պարզ է Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի պարագայում, ինչպես ասում

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Տարածաշրջանի երկրների և կառույցների դիրքավորումները ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևի վերաբերյալ

Հ/Հ	Պետություն	Քվեարկություն	Բնակչություն, մլն մարդ[17]	Կազմակերպություններ, որոնց անդամակցում են
1	Ուկրաինա	Կողմ	43	ԱՊՀ, ԵՄ ԱԳ[18]
2	Վրաստան	Կողմ	4	ԵՄ ԱԳ
3	Թուրքիա	Կողմ	86	ՆԱՏՕ, ՇՀԿ,
4	Իսրայել	Կողմ	9	-
5	Մոլդովա	Կողմ	4	ԱՊՀ, ԵՄ ԱԳ
6	ԱՄԷ	Կողմ	36	
7	Բելառուս	Դեմ	9	ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԵՄ ԱԳ, ՇՀԿ Դ
8	Ռուսաստան	Դեմ	146	ԱՊՀ, ԵԱՏՄ,ՀԱՊԿ, ՇՀԿ, ԲՐԻԿՍ
9	Սիրիա	Դեմ	18	-
10	Հայաստան	Չեռնապահ	3	ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԵՄ ԱԳ, ՇՀԿ ԵԳ[19]
11	Ղազախստան	Չեռնապահ	19	ԱՊՀ, ԵԱՏՄ,ՀԱՊԿ, ՇՀԿ
12	Տաջիկստան	Չեռնապահ	10	ԱՊՀ, ՀԱՊԿ,ՇՀԿ
13	Ղրղզստան	Չեռնապահ	7	ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ՇՀԿ
14	Իրան	Չեռնապահ	85	ՇՀԿ Դ[20]
15	Իրաք	Չեռնապահ	41	-
16	Չինաստան	Չեռնապահ	1450	ՇՀԿ, ԲՐԻԿՍ
17	Հնդկաստան	Չեռնապահ	1405	ՇՀԿ, ԲՐԻԿՍ
18	Պակիստան	Չեռնապահ	230	ՇՀԿ
19	Ուզբեկստան	Չի մասնակցել քվեարկությանը	34	ԱՊՀ, ՇՀԿ
20	Ադրբեջան	Չի մասնակցել քվեարկությանը	10	ԱՊՀ, ԵՄ ԱԳ, ՇՀԿ ԵԳ
21	Թուրքմենստան	Չի մասնակցել քվեարկությանը	6	ԱՊՀ

[16] https://www.crisisgroup.org/europe-central-asia/eastern-europe/ukraine/ukraine-war-global-crisis
[17] https://www.worldometers.info/population/ կայքի տվյալները 15.03.2022թ. դրությամբ:
[18] ԵՄ ԱԳ՝ Եվրամիության արևելյան գործընկեր:
[19] ՇՀԿ ԵԳ՝ Շանհայի համագործակցության կազմակերպության հետ երկխոսության գործընկերոջ կարգավիճակ:
[20] ՇՀԿ Դ՝ Շանհայի համագործակցության կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ:

են՝ «ով եփել է, նա էլ մատուցում է», սակայն մնացած աշխարհի պահվածքը ցույց է տալիս, որ թե՛ քաղաքական և թե՛ առավել ևս տնտեսական շահերի գերակայությունները տարբեր են: Այս դեպքում մեզ առավել հետաքրքրում են ոչ միայն Հարավային Կովկասի և սահմանակից երկրների, այլև եվրասիական և մերձավորարևելյան տարածաշրջանների դիրքավորումները՝ դրանք դիտարկելով համաշխարհային տնտեսության «տեկտոնական» շարժումների, ինչպես նաև հավակնությունների, երկրագնդի բնակչության մեջ ունեցած կշռի և ընդհանուր լոգիստիկայի տեսանկյունից: Պարզ է, որ կա միայն երկու ելք. կա՛մ մասնակիցը լինել այս վերափոխումների, կա՛մ դառնալ սոսկ ակնդիրն ու կատարողն այն գործընթացների, որոնց կիզակետերից կամ, ավելի շուտ, խաչմերուկներից մեկում հայտնվել է նաև Հայաստանը: Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հայաստանի և նրա անմիջական հարևանների ու տարածաշրջանային հիմնական շահագրգիռ կողմերի, ինչպես նաև ԱՊՀ, ՀԱՊԿ, ԵԱՏՄ, ՇՀԿ և ԲՐԻԿՍ անդամ (գործընկեր, դիտորդ) երկրների քվեարկությունների պատկերը ներկայացվում է աղյուսակ 2-ում:

Արձանագրենք այն փաստը, որ վերոթվարկյալ 21 երկրում ապրում է մոլորակի 7 մլրդ 930 մլն բնակչության շուրջ 46%-ը՝ 3 մլրդ 655 մլն մարդ: Սա խոսուն թիվ է՝ ինչպես աշխարհի բնական, ֆինանսական, մարդկային ռեսուրսների առկայության, այնպես էլ տնտեսական ինտեգրման աշխուժացման տեսանկյունից: Սակայն, մեր հայացքն ավելի շատ ուղղված է այն կառույցներին, որոնք ռազմական և տնտեսական քաղաքականության վարման համատեքստում սերտորեն առնչվում են Հայաստանին: Խոսքը ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԵՄ ԱԳ, ինչպես նաև ՇՀԿ կառույցների մասին է: Պետք է արձանագրել, որ մարդկության պատմության այս բախտորոշ պահին այն կառույցները, որոնց լիիրավ կամ գործընկեր անդամն է Հայաստանի Հանրապետությունը, ոչ միայն միակարծիք չեն, այլև ուղղակի վտանգավոր աստիճանի տարակարծիք են:

Մասնավորապես՝ ԱՊՀ 11 երկրից 2-ը կողմ է քվեարկել, 2-ը՝ դեմ, 4-ը՝ ձեռնպահ և ևս 3-ը չի մասնակցել քվեարկությանը: ՀԱՊԿ-ի երկրների դեպքում կողմ քվեարկողներ չկան, 2-ը դեմ են քվեարկել, 4-ը՝ ձեռնպահ: ԵԱՏՄ 5 երկրի պարագայում դեմ է քվեարկել 2-ը, ձեռնպահ՝ 3-ը: Տարակարծության առումով, բացառություն չէ նաև ՇՀԿ-ն: Այստեղ մեծամասնություն են կազմում ձեռնպահ քվեարկածները: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Աշխարհի համար ամենակարևոր իրադարձության վերաբերյալ նման տարակարծության պարագայում անորոշություններն անհամրելի են, իսկ ճիշտ կանխատեսումը՝ անհնար: Հետևապես, բացի բազմաշերտ վերլուծական գործունեությունից, մեզ սպասվում է բազմավեկտոր, նպատակային, ծանր ու ճկուն աշխատանք արտաքին աշխարհի հետ:

«Մետաքսի ճանապարհի» հիմնական շահագրգիռ խումբը

Այս գաղափարի իրականացման շահագրգիռ երկրների պարագայում նույնպես հետաքրքրական արձանագրումներ կան: «Մետաքսի ճանապարհի» հիմնական շահառուները՝ Չինաստանը, Հնդկաստանը, Պակիստանը, Իրանը և Հայաստանը, փորձելով հակամարտության պարագայում վարել հնարավորինս հավասարակշռված քաղաքականություն, դիրքավորվել են ձեռնպահ քվեարկած երկրների խմբում, իսկ մինչսևծովյան վերջին օղակ Վրաստանը՝ կողմ: Այժմ անդադառնանք տարածաշրջանի խոշոր խաղացողներին, նրանց դիրքավորումների դրդապատճառներին և կատարվող քայլերի տրամաբանությանը:

Չինաստան

Ասիական տարածաշրջանի հիմնական թելադրողը Չինաստանն է: Չինաստանի դիրքավորումն ունի երեք հիմնական հենք: Նախ՝ Պեկինը ցանկանում է պահպանել Ռուսաստանի հետ բարեկամության հանձնառությունը, որը հիմնված է փոխլրացնող տնտեսական շահերի և նոր աշխարհակարգի վերաբերյալ ընդհանուր տեսլականի համադրելի կետերի առկայության վրա: Երկրորդ՝ Չինաստանը ցան-

կանում է որևէ դեպքում չվատթարացնել ձևավորված հարաբերությունները Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ, կապեր, որոնք ռազմավարական առումով շատ կարևոր են երկրի տնտեսական զարգացմանը միտված խոշորագույն ծրագրերի իրականացման, ինչպես նաև նոր աշխարհակարգում առաջնային դերակատարում ունենալու համար: Եվ երրորդ՝ Պեկինը հավատարիմ է այն սկզբունքներին, որոնք երկար ժամանակ եղել են նրա արտաքին քաղաքականության «մեխերը», մասնավորապես՝ առաջնային համարելով պետությունների տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պաշտպանության կարևորությունը: Վերջինս ակներև բխում է նաև Չինաստանի պետական շահերից: Այս երեքի արդյունավետ համադրումը, ըստ էության, ներկա իրավիճակում անիրատեսական է, և հետևաբար՝ հակամարտող կողմերի նկատմամբ ցուցաբերվող հավասարակշռված քաղաքականությունը միակ հնարավոր տարբերակն է Չինաստանի համար: Եվ Չինաստանն այն երկիրն է, որը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում և Գլխավոր ասամբլեայում քվեարկեց նույն սկզբունքով՝ ձեռնպահ: Քանի դեռ ճգնաժամն ուղղակիորեն չի ազդել Չինաստանի հիմնական շահերի վրա, Պեկինի դիրքորոշումը կմնա որոշակի ռիսկից անդին և գործողությունների առումով՝ ինչ-որ տեղ երկիմաստ:

Հնդկաստան

Մյուս խոշոր «խաղացողը»՝ Հնդկաստանը, Ռուսաստանի համար ունի հատուկ և արտոնյալ ռազմավարական գործընկերոջ կարգավիճակ, որը սկիզբ է առնում դեռևս սառը պատերազմի ժամանակներից: Դա հիմնված է, նախ և առաջ, ռազմատեխնիկական համագործակցության վրա, ինչի արդյունքում Հնդկաստանի սպառազինության ու պաշտպանական համակարգերի ավելի քան 60 տոկոսը ռուսական ծագման է: Սակայն, Հնդկաստանն ունի մտավախություն առ այն, որ տարածաշրջանում ԱՄՆ-ի թալիբյան և թայվանյան սցենարները կարող են դառնալ Չինաստանի, Պակիստանի և Ռուսաստանի առավել սերտացման խթան, որի արդյունքում ինքն ակամայից, քաղաքական, ռազմական և տնտեսական առումներով, կհայտնվի լուսանցքում: Այս տարածաշրջանում տեսանելի են նաև ԱՄՆ-ի ձգտումները՝ Հնդկաստանին դարձնելու Չինաստանին հակակշիռ և իր կողմից մշակված տարածաշրջանային ռազմավարության իրականացման հիմնական հենասյուն: Սակայն, Ռուսաստանը, ի տարբերություն ԱՄՆ-ի, առավել հակված է համախմբելու իր, Չինաստանի և Հնդկաստանի ներուժը մեկ դաշտում: Հենց այդ մտադրությամբ է ստեղծվել Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ)[21], որն իր կազմում ներկայում ներառում է 8 երկիր՝ Ռուսաստան, Չինաստան, Հնդկաստան, Ղազախստան, Ղրղզստան, Պակիստան, Տաջիկստան, Ուզբեկստան: Այս կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ ունի 4 երկիր՝ Բելառուսը, Աֆղանստանը, Իրանը և Մոնղոլիան: Եվս 6 երկիր՝ Հայաստանը, Կամբոջան, Նեպալը, Շրի Լանկան, Թուրքիան և Ադրբեջանը, ընդգրկված են «ՇՀԿ երկխոսության գործընկերների» կազմում: Եթե իրատեսորեն դիտարկենք, ապա հատկապես Ռուսաստանի հետ Հնդկաստանի մի շարք գործարքներ և նախագծեր, արդյունավետ իրականացման տեսանկյունից, կարող են հայտնվել որոշակի ռիսկային գոտում, քանի որ ԱՄՆ-ի և Արևմուտքի ուշադրությունն այժմ, առավել քան երբևէ, կենտրոնանալու է Ռուսաստանի և Չինաստանի վրա, ու այս պարագայում Հնդկաստանի շահերը կարող են նաև անտեսվել: Սրանք են, թերևս, Հնդկաստանի զգուշավոր դիրքավորման հիմնական դրդապատճառները:

Պակիստան

Նմանատիպ է խնդիրը նաև Պակիստանի պարագայում, որը, սակայն, ունի իր նրբությունները: Մասնավորապես՝ աֆղանական թալիբներին ԱՄՆ-ի անվերապահ աջակցության պատճառով արդեն իսկ սրված են հարաբերությունները Վաշինգտոնի հետ, որից փորձում է օգտվել Ռուսաստանը: Մյուս կողմից, Ուկրաինան

[21] https://ria.ru/20201109/shos-1583750577.html

ապահովում էր Պակիստանի ցորենի ներմուծման ավելի քան 39%-ը: Այս դեպքում Ռուսաստանի օգնությունն ակնկալելն այնքան էլ իրատեսական չէ, քանի որ, գտնվելով խիստ պատժամիջոցների տակ, վերջինս դժվար թե առաջնահերթ համարի Պակիստանին ցորենով ապահովելու հարցը: Սակայն, քաղաքականության մեջ ամեն ինչ իր արժեքն ունի, և բացառված չէ, որ հակամարտության վերաբերյալ եվրոպական երկրների միասնական դիրքորոշումը Ռուսաստանին էլ ավելի մղի դեպի Արևելք և Հարավ: Ուստի, կարող է դիտարկվել հենց այդ սցենարը, երբ որոշակի քաղաքական պայմանավորվածությունների արդյունքում ռուսական ցորենը հասնի Պակիստան: Հետևապես՝ Պակիստանի պարագայում կարող է նաև նշմարվել արտաքին քաղաքականության սլաքների՝ որոշակի և տեսանելի փոփոխություն:

«Ծոցի» երկրներ, Վրաստան, Իրան, Թուրքիա և Իսրայել

«Պարսից ծոցի համագործակցության խորհրդի» բոլոր արաբական պետությունները[22] քվեարկել են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևի օգտին: Սակայն, Արաբական թերակղզում լինելով ԱՄՆ-ի մերձավոր գործընկերները, նրանք նաև շարունակաբար ամրապնդում են տնտեսական կապերը Ռուսաստանի հետ: Ուստի, այս պահին, գտնվելով «երկու քարի արանքում», նրանք չեն ցանկանում բացահայտ կերպով հակադրվել կողմերից որևէ մեկին: ԱՄԷ-ն[23], որը 2011 թ.-ից հետո էականորեն բարելավեց հարաբերությունները Ռուսաստանի հետ, խորապես գիտակցում է այս երկընտրանքը: Այդ իսկ պատճառով, որպես Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ, ԱՄԷ-ն՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի պարտադիր ուժ ունեցող բանաձևի պարագայում, պահպանեց չեզոքություն և քվեարկեց ձեռնպահ: Սակայն, նույն կառույցի Գլխավոր ասամբլեայում միացավ թերակղզու մյուս երկրներին և քվեարկեց կողմ: Ծոցի արաբական երկրները չափազանց զգուշավոր քաղաքականություն են վարում և երկու կողմերին զսպվածության կոչեր անելուց այն կողմ չեն փորձում անցնել: Հաշվի առնելով արաբական պետությունների ռազմավարական դիրքավորումը Ռուսաստանի հանդեպ՝ կարելի է ենթադրել, որ ԱՄՆ-ը՝ «Ծոցի» արաբական երկրների պարագայում, քվեարկության այս պատկերն ապահովելու համար բավարար ջանք է գործադրել, որից ակնկալվող շահաբաժինն արաբական երկրները կփորձեն ստանալ մոտ ապագայում:

Վրաստան

Խնդրո առարկա հարցի առնչությամբ հարավկովկասյան մեր երկու անմիջական հարևանների դիրքավորման պատկերում նույնպես որոշակիացում առկա չէ: Այստեղ զավեշտալի է Ադրբեջանի դիրքավորումը, որն այսպիսի խորության և ծանրության խնդրի պարագայում կարելի է համարել նաև «չդիրքավորում»: Ադրբեջանը համաշխարհային այս դժվար «դասից փախավ» և ուղղակի չմասնակցեց քվեարկությանը: Հասկանալի է, որ Թուրքիայի դասական «արբանյակը» լինելով, նրա դիրքավորման հնարավորությունները չափազանց սահմանափակ էին, ուստի, ավելորդ գլխացավանքից խուսափելու համար ընտրվեց թվացյալ «անվտանգ» տարբերակը՝ գործընթացին չմասնակցելը: Պատվաբեր է այդ ընտրությունը թե ոչ, մեր քննարկման խնդիրը չէ, և միայն հետագան ցույց կտա այդպիսի վարքի իրական արժեքն ու հետևանքները:

Վրաստանի պարագայում խնդիրը բարդ է նրանով, որ «Նորմանդյան քառյակում» Ռուսաստանի արծարծած հարցերը, հատկապես՝ ՆԱՏՕ-ի արևելյան ընդլայնման առումով, առնչվում են նաև Վրաստանին, ուստի, այս իրավիճակում յուրաքանչյուր կոշտ հակադրություն և միակողմանի ընտրություն կարող են ճակատագրական լինել՝ հատկապես հաշվի առնելով Աջարիայի թուրքական տնտեսական ինտերվենցիան, աբխազական և հարավօսեթական բարդ հիմնախնդիրնե-

[22] Պարսից ծոցի համագործակցության խորհրդի հիմնադիրներն են Արաբական Միացյալ Էմիրությունները, Սաուդյան Արաբիան, Կատարը, Քուվեյթը, Բահրեյնը և Օմանը:
[23] ԱՄԷ՝ Արաբական Միացյալ Էմիրություններ:

ը: Դա է պատճառը, որ կողմ քվեարկելով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում, Վրաստանը բարձրաձայն հայտարարեց Ռուսաստանի դեմ կիրառվող տնտեսական պատժամիջոցներին չմասնակցելու մասին, չնայած այն հանգամանքին, որ հասարակության որոշիչ մասը հստակ արտահայտում էր իր դիրքորոշումը՝ անվերապահ սատարելով Ուկրաինային: Ստիպված լինելով վարելու երկակի խաղ, Վրաստանն իր նախագահի շուրթերով, առանց գործնական քայլերի որոշակիացման, «սիրաշահում է» Արևմուտքին ու ոգևորում Ուկրաինային, սակայն երկրի գործադիր մարմնի ղեկավարի գործողությունները, կարծես թե, հակադարձում են դրան՝ իրականացնելով օպերատիվ կամ ռեակտիվ կառավարում, գերակա համարելով, նախ և առաջ, սեփական երկրի շահը: Իհարկե, այս երկակի խաղը հղի է վտանգներով, և Վրաստանի հիմնական խնդիրն այս դեպքում «մեծ խաղում» մանրադրամ չդառնալն է, փորձելով չզայրացնել առանց այն էլ զայրացած հյուսիսային հարևանին, որի հետ ունի ոչ միայն ընդհանուր սահմաններ, այլև չլուծված բարդագույն տարածքային խնդիրներ: Միաժամանակ, տեսնելով ուկրաինական սցենարն ու հասկանալով ՆԱՏՕ-ին միանալու անհեռանկարությունը, Վրաստանը փորձում է, այդուհանդերձ, շարժվել Արևմուտքի գաղափարախոսությանը համահունչ: Գծապատկեր 1-ում պարզորոշ երևում է, որ դեպի սևծովյան ավազան տանող «Մետաքսի ճանապարհի» ամբողջ «երթուղու» երկայնքով նա միայնակ է իր որոշակի դիրքավորումով՝ շրջապատված հավասարակշիռ քաղաքականություն վարող «ձեռնպահներով»:

Իրան

Իրանի նախագահը 2022 թ. փետրվարի 25-ին Ռուսաստանի նախագահի հետ տեղի ունեցած հեռախոսազրույցի ժամանակ դատապարտեց ՆԱՏՕ-ի ընդլայնման մտադրությունը դեպի Արևելք՝ համարելով դա «լուրջ սպառնալիք»[24]: Իրանի ԱԳ նախարարը վտանգավոր այս ճգնաժամի մեջ ուղղակիորեն մեղադրեց ՆԱՏՕ-ին՝ միաժամանակ, հակամարտության երկու կողմերին կոչ անելով դադարեցնել ռազմական գործողությունները: Այսօր Իրանի հիմնական մտահոգությունն այն է, որ ռուս-ուկրաինական թնջուկը կարող է խաթարել համաշխարհային «խոշոր խաղացողների» հետ Վիեննայում անցկացվող Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրի (ԳՀՀԾ) հետագա ընթացքը, որն անմիջականորեն առնչվում է իսլամական պետության միջուկային հավակնություններին: Միաժամանակ, Իրանն իր տնտեսական ռազմավարության կարևոր բաղադրիչներից մեկն է համարում ԵԱՏՄ-ի հետ առավել խորացված տնտեսական համագործակցությունը: Իհարկե, այս տեսանկյունից, Մոսկվային ձեռնտու է, որ Վիեննայի բանակցությունները չխաթարվեն և Իրանի նման ռազմավարական գործընկերը մնա կանխատեսելի տրամաբանության շրջանակում:

Թուրքիա

Հակամարտությունը, թերևս, շատ լուրջ և բազմադեմ խնդիր է Թուրքիայի համար: Այն սպառնում է ոչ միայն փչացնել Անկարայի հարաբերությունները Մոսկվայի հետ, այլև վնասել Թուրքիայի տնտեսությանը: Խնդիրը, նախ և առաջ, վերաբերում է էներգակիրներին, որոնց գների բարձրացումը թվում է՝ անխուսափելի է: Միաժամանակ, այս հակամարտությունը կրկին մշուշոտ է դարձնում կարծես թե կարգավորման ուղի բռնած զբոսաշրջային հատվածի կայուն զարգացման հեռանկարը: Իսկ զբոսաշրջային հոսքի դադարեցման հետևանքով կորսված եկամուտները յուրաքանչյուր տարի կարող են կազմել շուրջ 6 մլրդ ԱՄՆ դոլար: Լինելով ՆԱՏՕ-ի լիիրավ անդամ՝ Թուրքիան, առանց վարանելու, իր աջակցությունը հայտնեց Ուկրաինայի ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը, բայց նաև հրթացս փորձում է նվազագույնի հասցնել Ռուսաստանի հետ լարվածությունը: Քվեարկելով կողմ Գլխավոր ասամբլեայի բանաձևին՝ նա չմիացավ Ռուսաստանի դեմ պատժամիջոցների որևէ փաթեթի, հայտարարելով, որ դա դեմ

[24] https://www.crisisgroup.org/ukraine-war-global-crisis

է իր ազգային շահերին: Միաժամանակ, Թուրքիան՝ հանձին իր առաջնորդի, հակամարտող կողմերի համար նույնպես փորձում է դառնալ երկխոսության կամուրջ կամ հարթակ: Բազմակողմ, բազմաշերտ և բազմադեմ խաղի սիրահար թուրքական դիվանագիտությունը նման իրավիճակներում իրեն զգում է ինչպես «ձուկը ջրում»: Արցախյան պատերազմից անմիջապես հետո, Ուկրաինայի հետ միասին, աշխարհով մեկ գովազդված և հայ զինվորի գլխին պատուհաս դարձած «Բայրաքթարի» վաճառքի մեծ գործարքը գլուխ բերած Թուրքիան՝ նեղուցների կարգավիճակը հստակեցնող Մոնտրոյի համաձայնագրի «երկսայր սուրը ձեռքին», շարունակում է վարել իրեն սիրելի քաղաքականություն: Մասնավորապես, աներկբա պաշտպանելով Ուկրաինային, թուրքական առաջնորդ Էրդողանը խիստ քննադատեց ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին՝ Ռուսաստանի գործողությունները սոսկ դատապարտելու և Ուկրաինային օգնելու որոշակի քայլերն ուշացնելու համար: Օգտվելով պատեհ առիթից՝ նույն կառույցներին նա քննադատեց պատերազմին ընդառաջ Ուկրաինային աջակցելու «ուժեղ և լուրջ» մոտեցման բացակայության, այսինքն՝ թերզինելու համար, մատնացույց անելով իր կողմից տրամադրած «Բայրաքթարները» և դրանց ակտիվ կիրառումն ուկրաինական զինուժի կողմից: Էրդողանը նաև հայտարարեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արխայիկացման և կառույցի սկզբունքային բարեփոխումների անհրաժեշտության մասին: Սակայն, այդ ամենով հանդերձ, մտավախություն ունենալով, որ Ռուսաստանը և բանաձևին դեմ քվեարկած Սիրիան կարող են համատեղ ուժերով ավելացնել ճնշումն Իդլիբի վրա՝ ստիպելով մեծ թվով փախստականների շարժվել դեպի Թուրքիա, շարունակում է Ռուսաստանին «շողոքորթելու» իր դրավոր ուղին՝ փորձելով ստանալ վերջինիս երդվյալ գործընկերոջ և անգամ բարեկամի կարգավիճակը: Իհարկե, Թուրքիան շահագրգիռ է ռուս-ուկրաինական հակամարտության արագ կարգավորմամբ, քանի որ երկարատև պատերազմը միայն կխորացնի իր անվտանգային և տնտեսական մտահոգությունները, իսկ եթե Ռուսաստանն ամրապնդի վերահսկողությունն Ուկրաինայի սևծովյան ափամերձ գծի վրա, դա նաև ծանր հարված կհասցնի Թուրքիային՝ Սև ծովում ռազմածովային ուժերի հավասարակշռության առումով: Այս ամենով հանդերձ, Թուրքիան նաև քաջ գիտակցում է, որ Ռուսաստանի ռազմական և տնտեսական թուլացումը նոր հնարավորություն է ընձեռելու իրեն իրականացնելու իր դարավոր երազանքը՝ Հարավային Կովկասում դառնալով թելադրող ուժ:

Իսրայել

Այն պահից ի վեր, երբ ռուս-ուկրաինական ճգնաժամը թևակոխեց ռազմական հակամարտության փուլ, Իսրայելը փորձում է վարել հավասարակշռված քաղաքականություն: Եվ ՄԱԿ-ի վերոնշյալ բանաձևին կողմ քվեարկելը դեռևս չի նշանակում Ռուսաստանի հանդեպ քաղաքականության փոփոխություն: Իսրայելը քաղաքական ու տնտեսական լուրջ հարաբերություններ ունի և՛ Ռուսաստանի, և՛ Ուկրաինայի հետ: Դրանով է բացատրվում Իսրայելի վարչապետի փետրվարյան ակտիվացումը և երկու կողմերի միջև հաղորդակցման «կամուրջ» դառնալու պատրաստակամությունը: Հաշվի առնելով հակամարտող երկու երկրներում հրեական բավական ազդեցիկ ու մեծաթիվ համայնքների առկայության փաստը, ինչպես նաև 9 մլն բնակչություն ունեցող Իսրայելում շուրջ 1.5 մլն ռուս և ուկրաինացի գաղթականների ներկայությունը, Իսրայելն Ուկրաինայի հանդեպ ցուցաբերում է տեսանելի համակրանք, սակայն փորձում նաև իրեն չօտարել Ռուսաստանից: Այդ է պատճառը, որ նա չաջակցեց Ռուսաստանին դատապարտող՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևին, ինչպես դա արել էր 2014 թ.-ին՝ «Ղրիմի անեքսիայի մասին» բանաձևի դեպքում, սակայն Գլխավոր ասամբլեայում քվեարկեց կողմ: Մինչ ներկա պահն ընդունելով Ռուսաստանին վերաբերող տնտեսական պատժամիջոցների կիրառման անհրաժեշտությունը՝ Իսրայելը դեռևս չի սկսել դրանց գործնական կատարման փուլը, ինչն ակնառու է ռուս մեծահարուստների

այն գույքային խնդիրների պարագայում, որոնք գտնվում են Իսրայելում: Այսինքն՝ Իսրայելը, կողմ քվեարկելով բանաձևին, այդուհանդերձ, դիրքավորվել է չեզոք գոտում:

Հայաստան

Այսպիսին է մեր տարածաշրջանն այսօր՝ փոթորկուն, դժվարկանխատեսելի և տարակարծիք: Այստեղ, երկրագնդի այլ տարածաշրջանների համեմատ, ավելի ակնառու է տնտեսական և քաղաքական գործոնների անկանոն ու անորոշ միահյուսումը, որն ուղղակի մեզ պարտադրում է յուրաքանչյուր քայլն անել ըստ «Տասը չափիր, մեկ՝ կտրիր» խոհեմ սկզբունքի՝ առժամանակ մի կողմ թողնելով ներքին չլուծված, հաճախ դրսի «բարեկամ» ուժերի կողմից հատուկ մեր հոգեկերտվածքի համար «սարքովի» խնդիրները: Բայց պետք է նաև գիտակցել, որ «չափման» ու «կտրման» տեմպերը չպետք է լինեն ակադեմիական դանդաղկոտությամբ, այլ՝ աշխարհակարգի փոփոխմանը միտված քայլերի արագությանն ու տրամաբանությանը համահունչ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է մշակել ելքի բազում սցենարներ՝ հիմքում դնելով մեր ազգային և տնտեսական շահը: Մեր տարածաշրջանն այս պահին նման է մի մեծ խաղասեղանի, որի շուրջ բաշխված են դերեր և կարգավիճակներ՝ ըստ կարողունակության, հնարավորության և կշռի: Կարող ես լինել և՛ խաղացող, և՛ խաղասեղան, և՛ անգամ սփռոց: Ընտրությունը մերն է, ու այս դեպքում պիտի լինենք և՛ իրատես, և՛ հավակնոտ՝ մեր բաղձալի ցանկությունները համահունչ դարձնելով մեր հնարավորություններին: Ընդ որում, պետք չէ հույսը դնել արտաքին աշխարհից ինչ-որ մի խոշոր «խաղացողի» վրա, քանի որ նրանք բոլորն այս պահին զբաղված են իրենց նոր ու հին գործերի կարգավորմամբ: Հետևապես՝ մենք պիտի ընտրենք մեր դերն ու կարգավիճակը՝ ներկայացնելով մյուսներին:

Այսպիսի բարդ ժամանակաշրջանում մեզ, նախ և առաջ, անհրաժեշտ է չեզոքացնել ներքին տարաձայնությունները, միավորել Հայաստանի, Արցախի և Սփյուռքի ներուժը, իրականացնել համակարգված հայակենտրոն գործողություններ և դրսևորել օր օրի ահագնացող արտաքին մարտահրավերներին մեկ ընդհանուր ճակատով դիմակայելու հավաքական կամք: Հաջողության միակ ճանապարհը սա է:

Հետևաբար, առավել քան երբևէ, արդիական է անմահ Չարենցի մեկ դար առաջ հնչեցրած մարգարեական պատգամը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո միասնական ուժի մեջ է»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://www.uvic.ca/humanities/germanicslavic/people/home/faculty/profiles/yekelchykserhy.php
2. https://histrf.ru/read/articles/drievnierusskoie-ghosudarstvo-kiievskaia-rus
3. https://geomap.com.ua/ru-uh8/299.html
4. https://day.kyiv.ua/ru/article/istoriya-i-ya/pereyaslavskoe-soglashenie-1654-goda-istoricheskie-uroki-dlya-ukrainskogo
5. https://www.prlib.ru/history/619017
6. https://bigenc.ru/domestic_history/text/4217923
7. https://www.bbc.com/ukrainian/blog-history-russian-43110921
8. https://ria.ru/20141215/1037731276.html
9. https://www.dw.com/ru/%D0%BD%D0%BE%D1%80%D0%BC%D0%B0%D0%BD%D0%B4%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F-D1%87%D0%B5%D1%82%D0%B2%D0%B5%D1%80%D0%BA%D0%B0/t-18210985
10. https://www.azatutyun.am/a/31714944.html
11. https://www.prlib.ru/history/619242
12. https://armenpress.am/arm/news/1076314/
13. https://rus.ozodi.org/a/31724408.html
14. https://news.un.org/ru/story/2022/03/1419092
15. www.investopedia.com/terms/b/brics.asp
16. https://www.crisisgroup.org/europe-central-asia/eastern-europe/ukraine/ukraine-war-global-crisis
17. https://www.worldometers.info/population/
18. https://ria.ru/20201109/shos-1583750577.html
19. https://regnum.ru/news/3517065.html

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук

СЛОЖНАЯ ПРОБЛЕМА РОССИЙСКО-УКРАИНСКИХ ОТНОШЕНИЙ. КАКУЮ ПОЗИЦИЮ ЗАНИМАЮТ СТРАНЫ МИРА?

Любое политическое, военное или экономическое событие, происходящее в постковидном мире, способно коренным образом изменить наши представления, как в плане выявления истоков того или иного события, так и в плане оценки его мотивов и предсказания конечного результата.

Вызов падемии COVID-19 выявил общие пробелы при антикризисном управлении в форс-мажорных ситуациях, а в результате хаотичного информационного обвала, выявился феномен агрессивной реакции части людей на выполнение, казалось бы, примитивных бытовых и дисциплинарных обязанностей. Другими словами, у одного и того же явления образовались две «армии»-верующих и неверующих. Основной причиной такого разногласия стал противоречивый информационный «терроризм», выработавший определенное негативное отношение ко всем запланированным общеобязательным мерам, которые проводились в целях обеспечения безопасной, качественной жизни и здоровья человека. И вот, еще не до конца освобожденный из кошмара COVID-ных страхов, мир в виде российско-украинского военного конфликта, погружается в новый долгий кошмар. В данном случае, в отличие от предыдущего, нет общего совместного решения по поводу этого события, даже в тех объединенях или организацях, чье единое мнение эффективно использовалось как главный козырь в подобных «форс-мажорах» или кризисных ситуациях.

Любой военный конфликт–это катастрофа с огромным количеством человеческих и материальных потерь. Независимо от их масштабов, все они имеют общую черту-это высокая вероятность повторения, так как роль победителя и проигравшего становится очень относительной на протяжении долгого исторического времени. Доказательством тому являются две мировые войны 20-го века, когда сменились победители, а за активными «горячими» войнами последовали «холодные» фазы, логическим итогом которых было в нужный момент возвратится к «горячей» фазе, с почти теми же игроками. Однако, в этой периодической цепочке, в силу логики «холодной» фазы, позиции и роли могли меняться и, не исключено, что те, кто раньше содействовали на одном фронте, оказались бы в противоположных «окопах».

Армения, в настоящее время имеющая нерешенный арцахский вопрос, недружественные отношения как минимум с двумя из четырех соседних стран и нерешенные пограничные вопросы, также оказалась в подобной ловушке. Осознавая невозможность окончательного решения конфликта военным путем, а также, понимая последствия нашей позиции по российско-украинскому военному конфликту, нам необходимо в короткие сроки провести максимально точный анализ внешней и внутренней обстановки, путем разработки возможных сценариев исхода. Без этого невозможно выйти из сложного процесса изменения мироустройства, получив лишь «легкие царапины». Для того, чтобы составить «дорожную карту» и график наших дальнейших действий, прежде всего, необходимо иметь четкое представление о том, как расположены страны и регионы мира по отношению к российско-украинскому конфликту и каковы мотивы и доводы этой позиции. Следует также учитывать, что возникающие в дальнейшем ситуации будут не только жизненно важными для Армении по своей сути, но и будут содержать в себе ярко выраженный экзистенциальный компонент.

Ключевые слова: *военный конфликт, кризис, постковидный мир, ООН, Россия, Украина, Армения*

Hamazasp GALSTYAN
Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

COMPLEX PROBLEM OF RUSSIAN-UKRAINIAN RELATIONS. WHAT POSITION DO THE COUNTRIES OF THE WORLD TAKE?

Any political, military or economic event taking place in the post-COVID world can radically change our understanding, both in terms of identifying the origins of this or that event, and in terms of assessing its motives and predicting the final result. The challenge of the Covid pandemic revealed common gaps in anti-crisis management in force majeure situations, and as a result of a chaotic information collapse, the phenomenon of an aggressive reaction of some people to the performance of seemingly primitive domestic and disciplinary duties was revealed. In other words, two “armies” of believers and non-believers formed around the same phenomenon. The main reason for this disagreement was the controversial information "terrorism", which developed a certain negative attitude towards all the planned mandatory measures that were carried out in order to ensure a safe, quality life and human health. And now, not yet fully freed from the nightmare of covid fears, the world in the form of the Russian-Ukrainian military conflict is plunging into a new long nightmare. In this case, unlike the previous one, there is no common joint decision regarding this event, even in those associations or organizations whose unanimous opinion was effectively used as the main trump card in such "force majeure" or crisis situations.

Any military conflict is a catastrophe with a huge amount of human and material losses. Regardless of their scale, they all have in common a high probability of repetition, as the role of winner and loser becomes very relative over a long historical time. Proof of this are the two world wars of the 20th century, when the winners changed, and active “hot” wars were followed by “cold” phases, the logical outcome of which was to return to the “hot” phase at the right time, with almost the same players. However, in this periodic chain, due to the logic of the “cold” phase, positions and roles could change and it is possible that those who previously contributed on one front would find themselves in opposite “trenches”.

Armenia, which currently has an unresolved Artsakh issue, unfriendly relations with at least two of its four neighboring countries, and unresolved border issues, has also found itself in a similar trap. Realizing the impossibility of a final solution to the conflict by military means, as well as understanding the consequences of our position concerning the Russian-Ukrainian military conflict, we need to quickly conduct the most accurate analysis of the external and internal situation by developing possible outcome scenarios. Without this, it is impossible to get out of the complex process of changing the world order, having received only “light scratches”. In order to draw up a "road map" and a schedule of our further actions, first of all, it is necessary to have a clear idea of how the countries and regions of the world are located in relation to the Russian-Ukrainian conflict and what the motives and arguments for this position are. It should also be taken into account that the situations that arise in the future will not only be vital for Armenia in their essence, but will also contain a pronounced existential component.

Key words: *military conflict, crisis, post-COVID world, UN, Russia, Ukraine, Armenia*